

Իսկ իր ծայր աստիճան հասարակասիրութեան վկայ են բոլոր վանականը ու զինքը մօտէն ճանչցող ազգայինք։ Այդ ոգով՝ նախանձախնդիր էր Մխիթարայ Տան ներքին և արտաքին փայլին ու բարեզարդութեան, անոր վաղեմի սովորոյթներուն, օրինապահութեանց և աւանդութեան, անոր բարոյական և գրական զարգացումին. ան երբեք կասիլ չէր գիտեր Միաբանութեան սիրոյն առջև, որուն համար զոհուիլն իսկ ոչինչ էր իրեն համար։

Սոյն եռանդէն մղուած՝ ամէն կողմ կը հասնէր, մինչև իսկ վանական պարտէզին ներքին խորշերն ու անկիւնները։ Շատ կը սիրէր ծաղկադարմանութիւն, և յիշուաւ՝ ծաղիկի մը կեանքին հետ այլաբանական մտքով և հիացումով կը դիտէր ու կը համեմատէր բարոյական կեանքի մը աճումն ու արտադրութիւնները։ Ծաղիկ հասցնելու ինքնահնար միջոցներ ունէր, ու երբ կը յաջողէր — ինչպէս ստէպ — գոհ և անմեղ ժպտով մը կը բերէր ու կը յանձնէր բուրաստաններու ազատ տրամադրութեան, առանց ու է փոքրիկ նախապատուութեան մը ակնկալութեան, որ հասակէ ալ ըլլար ծաղկադարման եղբայրակիցը, ինչ որ ինքնին ցոյց կու տար անոր խոնարհ հոգին։ Իր մէկ փափագն էր, ինչպէս կ'ըսէր, օրին մէկը բազմագոյն վարդերէ կազմուած գօտիի մը մէջ տեսնել ամբողջ կղզեակը՝ իբրև ի վարդապսակ շրջանակի, տալով անոր խորհրդաւոր նշանակութիւն մը. և այդ դիտաւորութեամբ լռիկ մնջիկ բազմաթիւ արմատներ ու ճղիկներ անծանօթ անկիւններու մէջ կը մշակէր։ Երկիւղած յարգանք և յատուկ բարեպաշտ հոգածութիւն մ'ունէր մայրավանքիս «Աստուածածնայ Բլրակ»ի ածուններուն և անոր մերձակայ Մխիթարեան Գերեզմանոցի պարտէզին հանդէպ։ Հոս տնկեր էր աստիճանական կարգերով՝ ըստ եղանակին բացուող բազմատեսակ ծաղիկներ, որպէս զի ասոնք միշտ զարդարուած պահն ոսկրերը Եր. Մխիթարայ երջանկայիշատակ զաւակաց, որոնց հոգիէն շատ բան ամբարած էր իր մէջ մեր Հանգուցեալը։ Գերեզմանատան կեդրոնը շինած էր նաև սրտաձև աւազանիկ մը, որուն տուած խորհրդական իմաստը գուշակել զժուար չէ։ Իր զգացած անհուն երախտագիտութիւնը ստէպ զինքը հոն կը մղէր. ուստի շատ անգամ զինքը հոն գտնելն աւելի ապահով էր։

Սակայն Հ. Աւետիք Վ.ի մեծագոյն արժանիքը կը կազմեն անոր բազմամեայ առաքելութիւնը և հոգևոր հայրութիւնը իբր ղաստիարակ, և այս կրկնակ մարգերուն մէջ ալ հոգւոց փրկութեան իր եռանդն ու անձնանուիրութիւնը ամէն գովասանքէ վեր եղած է։ Տէրունական այգւոյն մէջ տիպար հովիւ մ'էր հայրագործով հոգածութեամբ. գութ և կարեկցութիւն կը սփռէր ամէն ատեն և ամենքին հանդէպ անխտիր։

Քահանայ ձեռնադրուելէն անմիջապէս ետքն է որ կը ղրկուի ի Պարտիզակ (1888-1892) իբր օգնական՝ ժողովրդապետ Հ. Ներսէս Վ. Ճնտոյեանի (յետոյ Եպս. Մշոյ և Վասպուրականի)։ Ապա կը տեսնենք զինքը ժողովրդապետ թէ՛ ի Պարտիզակ և թէ՛ ի Նիկոմիդիա (1894-1899)։ Նոյն միջոցին Ս. Հնազանդութիւնը ուրիշ կարևոր առաքելութեան մը կը կոչէ արդիւնազարդ և աստուածասէր հովիւը. այն էր՝ վանական աշակերտաց ԼԴ. դասուն վերակացութեան։ Եւ Հ. Աւետիք Վ. հպատակելով Մեծաւորաց կամքին՝ կու գայ ի Ս. Ղազար ու կը ստանձնէ նոր փափուկ պաշտօնը, զոր ամբողջ 6 տարի վարելով անձնանուէր ու հայրագութ սիրով և եռանդով՝ կու տայ 1906-ին Ռւխտիս 7 նոր Մխիթարեան քահանաներ։ Այս ժամանակամիջոցիս՝ իրեն կը յանձնուի նաև վարչական ժողովի անդամակցութեան պաշտօնը որ կը տևէ մինչև ընդհ. ժողով (1903-1909)։ Յետոյ կը կարգուի դարձեալ ժողովրդապետ Նիկոմիդիոյ կաթ. Հայոց, ճանչցուելով հոն թուրք իշխանութեան առջև՝ նաև իբր մուրախաս։ Հոս՝ առաջնորդարանին հին շէնքը այլ ևս անբաւական